# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## NՄՊՀ -ՄԱԱՊՁԲ -22/17

ք.Երևան

«2» մարտի 2022թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կրոմա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Մանուչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N: հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա)պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա)պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ)հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից. վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը և պահանջել

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավոր

կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,ինչպես նա
ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլո
անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի),եթ
Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական
համարվում,եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարո
փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրի
ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասի
անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարվա
ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշ
գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրի
համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանք
պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապա
տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներու
մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողի
վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարմա
ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 6.5 կետու
նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագր
պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել
թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից
հետո` ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան
պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով
ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից
հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված
կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով
նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացեով
մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված
կարգով,ծավալներով,ժամկետներում և հացեով մատակարարված և
Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա
գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի),եթե
Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է
համարվում,եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու
ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել
ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը` պայմանագրով նախատեսված
կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի
բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան` Գնորդի կողմից
սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ
ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և
քանակի ապրանք` պայմանագրով նախատեսված ժամկետներում և
հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը
հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում,պայմանագրով
նախատեսված կարգով, լրացնել թերի

հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 73 728 /յոթանասունյոթ հազար յոթ հարյուր քսանութ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդորում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 5էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

Մրցակցության
պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք.Երևան, Տիգրան
Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական
գանձապետարան
գործառնական
վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա.Վահանյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ
0060, ՀՀ, ք. Երևան, Ավան 4/14
ՀՎՀՀ 00888954
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գր.Լուսավորիչ փող 9
h/h 1570020377270100
Ա. Մանուչարյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
«2» մարտի 2022թ. կնքվ
ՄՊՀ-ՄԱԱՊՁԲ-22/17 ծածկագրով պայմանագ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը և ապրանքային նշանը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը * | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր առավելագույն գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկ տը * |
| 1 | Աշխատանքային ձեռնոցներ | Ցանկացած | Կենցաղային օգտագործման ռետինե ձեռնոցներ՝ նախատեսված բազմակի օգտագործման համար, M, L չափերի: | զույգ | 360 | 5 400 | 15 | ՀՀ, ք. Երևան Տիգրան Մեծի 4 | 15 | Պայմ նագր վ նախա եսվա կողմ րի իրավ ունքն րի և պարտ կանո թյու ների կատա ման պայմ նն ուժի մեջ մտնե ու օրվա ից մինչ 2022 թվակ նի դեկտ մբեր 15-ը: |
| 3 | Ախտահանիչ հեղուկ նյութեր | Ցանկացած | Հեղուկ նյութ, ախտահանող, սպիտակեցնող, լաքահանող միջոց՝ ժավել, չափագրված 5լ տարողությամբ տարրաներով կամ 1լ տարողությամբ տարրաներով: | լիտր | 90 | 6 300 | 70 | | 70 | |
| 7 | Մեկանգամյա օգտագործման բաժակներ | Ցանկացած | Մեկանգամյա օգտագործման պլաստիկ բաժակ առնվազն 100մլ, սպիտակ կամ թափանցիկ: | հատ | 4 | 36 000 | 9 000 | | 9 000 | |
| 8 | Ավելներ | Ցանկացած | Հատակ ավլելու խոզանակ պլաստմասե ձողով, աղբը հավաքելու համար տարբեր գույների պլաստմասե գոգաթիակով, | հատ | 2 080 | 2 080 | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | խոզանակի լայնությունը մինչև 30սմ, պլաստմասե ծողի և գոգաթիակի ծողի երկարությունն առնվազն 75սմ: | | | | | | | |
| 10 | Մաքրող մածուկներ և փոշիներ | Ցանկացած | Ունիվերսալ մաքրող փոշի: Բաղադրությունը ակտիվ բաղադրիչներ, որոնք մաքրում են կերամիկական և մետաղական մակերևույթները, չափագրված, առնվազն 450 մլ տարողությամբ տարաներով, մանրեասպան հատկությամբ: Անվտանգությունը, մականշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգ□-ի: | հատ | 380 | 380 | 1 | | 1 | |
| 12 | Զուգարանի մաքրման նյութեր | Ցանկացած | Մաքրող, ախտահանիչ գել, սանհանգույցի մաքրման համար, մինչև 1 լ տարողությամբ տարաներով: Անվտանգությունը, մականշումը և փաթեթավորումը` ըստ | լիտր | 747 | 11 205 | 15 | | 15 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ կառավարության 2004թ.դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգ□-ի: | | | | | | |
| 13 | Ապակի մաքրելու միջոց | Ցանկացած | Ապակիների և հայելիների մաքրման նյութեր, չափագրված 5լ տարողությամբ տարաներով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. Դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևույթաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի □: | լիտր | 320 | 1 600 | 5 | | 5 |
| 14 | Կահույք մաքրելու լաթ | Ցանկացած | Լաթ, 100 % միկրոֆիբրայից, նախատեսված կահույքը մաքրելու համար, առնվազն 40x40սմ: | հատ | 266 | 9 576 | 36 | | 36 |
| 15 | Հատակ մաքրելու լաթ | Ցանկացած | Բարձրորակ լաթեր առնվազն 70x80սմ, հատակը լվանալու համար (100% միկրոֆիբրա): | հատ | 1 187 | 1 187 | 1 | | 1 |

* Եթե չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի **15**-ը:

Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը կատարողը և/կամ նրա ներկայացուցիչը Պատվիրատուի պահանջով ապրանքը մատակարարում է Պատվիրատուի գտնվելու վայր առնվազն **1-2** (մեկից-երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

***Բոլոր ապրանքները լինեն չօգտագործված, նոր:

**ԳՆՈՐԴ**

Մրցակցության
պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք.Երևան, Տիգրան
Մեծ 4
ՀՀ ՖՆ կենտրոնական
գանձապետարան
գործառնական
վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա.Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

ԿՐՈՄԱԳՐՈՒՊ ՍՊԸ
0060, ՀՀ, ք.Երևան, Ավան 4/14
ՀՎՀՀ 00888954
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գր.Լուսավորիչ փող 9
Հ/Հ 1570020377270100
Ա.Մանուչարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված
«2» մարտի 2022 թ. Կնք
ՄՊՀ-ՄԱԱՊՁԲ-22/17 ծածկագրով պայմանագ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում ** | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18141100/1 | Աշխատանքային ձեռնոցներ | - | 540 | 540 | 1 890 | 1 890 | 1 890 | 3 240 | 3 240 | 3 240 | 5 400 | 5 400 | 5 400 | 5 400 |
| 3 | 24451141/1 | Ախտահանիչ հեղուկ նյութեր | - | 630 | 630 | 2 205 | 2 205 | 2 205 | 3 780 | 3 780 | 3 780 | 6 300 | 6 300 | 6 300 | 6 300 |
| 7 | 39221350/1 | Մեկանգամյա օգտագործման բաժակներ | - | 3 600 | 3 600 | 12 600 | 12 600 | 12 600 | 21 600 | 21 600 | 21 600 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 |
| 8 | 39221410/1 | Ավելներ | - | 208 | 208 | 728 | 728 | 728 | 1 248 | 1 248 | 1 248 | 2 080 | 2 080 | 2 080 | 2 080 |
| 10 | 39812600/1 | Մաքրող մածուկներ և փոշիներ | - | 38 | 38 | 133 | 133 | 133 | 228 | 228 | 228 | 380 | 380 | 380 | 380 |
| 12 | 39831276/1 | Զուգարանի մաքրման նյութեր | - | 1 120.5 | 1 120.5 | 3 921.75 | 3 921.75 | 3 921.75 | 6 723 | 6 723 | 6 723 | 11 205 | 11 205 | 11 205 | 11 205 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 39831280/1 | Ապակի մաքրելու միջոց | - | 160 | 160 | 560 | 560 | 560 | 960 | 960 | 960 | 1 600 | 1 600 | 1 600 | 1 600 |
| 14 | 39831282/1 | Կահույք մաքրելու լաթ | - | 957.6 | 957.6 | 3 351.6 | 3 351.6 | 3 351.6 | 5 745.6 | 5 745.6 | 5 745.6 | 9 576 | 9 576 | 9 576 | 9 576 |
| 15 | 39831283/1 | Հատակ մաքրելու լաթ | - | 118.7 | 118.7 | 415.45 | 415.45 | 415.45 | 712.2 | 712.2 | 712.2 | 1 187 | 1 187 | 1 187 | 1 187 |

**ԳՆՈՐԴ**

Մրցակցության
պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք.Երևան, Տիգրան
Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական
գանձապետարան
գործառնական
վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա.Վահանյան

------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

ԿՐՈՄԱԳՐՈՒՊՍՊԸ
0060, ՀՀ, ք.Երևան, Ավան 4/14
ՀՎՀՀ 00888954
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գր.Լուսավորիչ փող 9
հ/հ 1570020377270100
Ա.Մանուչարյան

------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«2» _____2022թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԱՊՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ___________________ | ___________________ |
| գտնվելու վայրը _______ _____ | գտնվելու վայրը _____________ |
| հհ _________________ | հհ _________________ |
| հվհհ _______________ . | հվհհ _______________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ
## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__»___ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
___________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________ | ___________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«2» _____ 2022թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԱՊՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
(Պատվիրատուի անունը) (Կատարողի անունը)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N__________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն